Լոտ 1-Անշարժ գույք՝ ՀՀ ք. Երևան, Արաբկիր Քանաքեռ ՀԷԿ փող., 11 շ., 63 բնակարան: Անշարժ գույքի նկարագիրը՝ սեփականատեր՝ Արմեն Մխիթարյան, սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը՝ 06082018-01-0070, սեփականության իրավունքի գրանցման վկայականի տրման ամսաթիվը՝ 06.08.2018թ., իրավունքի տեսակ՝ սեփականություն, նպատակային նշանակությունը՝ բնակելի, գործառնական նշանակությունը՝ բնակարան, ընթացիկ օգտագործումը՝ բնակարան, տրանսպորտային մատչելիությունը՝ ասֆալտապատ, շենքի տեխնիկական վիճակը՝(-4,4)՝ 0, վնասվածության աստիճան՝ տեղազննման ժամանակ ակնադիտական վնասվածքներ չեն հայտնաբերվել, բնակարանի ներքին ընդհանուր մակերեսը՝ 62,8, շենքի հարկայնությունը՝ 4, բնակարանի հարկը՝ 1, տանիք, տանիքածածկ՝ լանջավոր, մետաղական, միջհարկային ծածկը ե/բ սալեր, շենքի տիպը՝ քարե, այլ տեղեկատվություն՝ առկա է 12.8 քմ մակերեսով ինքնակամ կառուցված կցակառույց, որը ներառված է գնահատման արժեքի մեջ: Առկա է 1 ինքնակամ բացված դուռ, որը հանդիսանում է մուտք դեպի բնակարան: Շենքը հանրակացարան է: Ենթակառուցվածքներ՝ ջուր՝ առկա է, կոյուղի՝ առկա է, էլ. էներգիա՝ առկա է, գազ՝ առկա է, սպասարկող համակարգեր՝ ջեռուցում, ամփոփում՝ առկա են, այլ տեղեկատվություն, մուտքի դուռ՝ մետաղական՝ փայտե երեսվածքով, ներսի դռներ՝ փայտյա, պատուհաններ՝ մետաղապլաստե, միջանցք՝ հատակը՝ սալիկապատ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ ներկած, ներքին հարդարման վիճակը(0-7)՝ 4, հյուրասենյակ՝ հատակը՝ լամինատ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ ներկած, ներքին հարդարման վիճակը(0-7)՝ 4, սենյակներ՝ հատակը՝ լամինատ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ ներկած, ներքին հարդարման վիճակ(0-7)՝ 4, խոհանոց՝ հատակը՝ սալիկապատ, պատերը՝ սալիկապատ և ներկած, առաստաղը՝ ներկած, ներքին հարդարման վիճակը(0-7)՝ 4, սանհանգույց՝ հատակը՝ սալիկապատ, պատերը՝ սալիկապատ, առաստաղը՝ պլաստմասե վահանակներ, ներքին հարդարման վիճակը(0-7)՝ 4, ընդհանուր ներքին հարդարման վիճակը(0-7)՝ 4:

Լոտի արժեքը կազմում է 18.306.000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Անշարժ գույք՝ ՀՀ ք. Երևան, Արաբկիր համայնքի Ա. Խաչատրյան փող. 6, շենքի թիվ 49 բնակարան: Անշարժ գույքի նկարագիրը՝ նպատակային նշանակությունը՝ բնակելի, գործառնական նշանակությունը՝ բնակարան, ընթացիկ օգտագործումը՝ բնակարան, գույքային իրավունքները՝ սեփականության, սեփականատեր՝ Հասմիկ Մակարյան, սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը՝ 1648258, սեփականության իրավունքի գրանցման վկայականի տրման ամսաթիվը՝ 16.09.2004թ., տեղադրությունը՝ լավ, դիրքը՝ լավ, տարածաշրջանի գրավչությունը՝ լավ, տրանսպորտային մատչելիությունը՝ ասֆալտապատ/միջին, մեքենաների կայանման հարմարավետությունը՝ բավարար՝ բակում, հեռավորությունը հասար. սպասարկման օբյեկտներից՝ 100 մ շառավղով, շրջակա միջավայրը՝ բնակելի թաղամաս, բարեկարգված բակի առկայությունը՝ կիսաբարեկարգ, այլ տեղեկատվություն՝ չունի, շենքի կառուցվածքը՝պանելային, շենքի կառուցման տարեթիվը՝ 1980-ական թթ., բնակարանի միջհարկային ծածկը՝ երկաթբետոնե, վթարայնության աստիճան՝ տեղեկատվություն առկա չէ, առաստաղի բարձրությունը՝ 2.7 մ, արտաքին պատերը՝ պանելային, արտաքին հարդարումը՝ չունի, բնակարանի ներքին ընդհանուր մակերեսը՝ 61,96, շենքի հարկայնությունը՝ 12, բնակարանի հարկը՝ 1, վերջին հարկ՝ ոչ, արտաքին լուսամուտներ՝ փայտե, արտաքին լուսամուտների ընդհանուր վիճակը՝ միջին, արտաքին դուռ՝ մետաղական, արտաքին դռան վիճակը՝ միջին, միջսենյակային դռներ՝ փայտե, միջսենյակային դռների ընդհանուր վիճակը՝ բավարար, սենյակները՝ հատակը՝ մանրահատակ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ ներկած միջին, խոհանոցը՝ հատակը՝ լինոլեումապատ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ ներկած միջին,

սանհանգույցը՝ հատակը՝ սալիկապատ, պատերը՝ սալիկապատ, առաստաղը՝ կախովի բարվոք, միջանցքը՝ պատերը՝ ներկած, առաստաղը՝ միջին ներկած, ջրամատակարարում՝ առկա է, ջրահեռացում՝ առկա է, էլեկտրամատակարարում՝ առկա է, գազամատակարարում՝ առկա է, ջեռուցում՝ ջեռուցման համակարգով:
Լոտի արժեքը կազմում է 31.833.000ՀՀ դրամ:

Լոտ 3 – Շարժական գույքի նկարագիրը՝ մակնիշը՝ RANGE ROVER, տիպը՝ SPORT HSE 4.4, S/Մ գրանցման վկայագիր՝ PJ431273, սեփականատերեր՝ <<Տէտ Ինվեստ>> ՍՊԸ, պետհամարանիշ՝ 777 XX 27, նույնականացման համար՝ SALSF25477A992472, ՏՄ տեսակը՝ թեթև մարդատար, թափքը՝ ունիվերսալ, գույնը՝ սև, շարժիչի տեսակը՝ բենզինային, անիվները՝ միջինից բարձր, անվահեծերը՝ ալյումինե, շարժիչի հզորությունը ՁՈՒ՝ 300, վազքը կմ՝ 270.000, թողարկման տարեթիվը՝ 2006թ., քարշակը՝ լիաքարշակ, տեխնիկական վիճակը՝ միջինից բարձր, սրահը՝ կաշեապատ, փոխանցման տուփը՝ ավտոմատ, ղեկը՝ ձախակողմյան, այլ գործոններ՝ առկա են փոքր վնասվածքներ և քերծվածքներ: Արտաքին տեսքը - LAND ROVER RANGE ROVER AUTOBIOGRAPHY L 320 (2012) -ի:

Լոտի արժեքը կազմում է 3.692.800 ՀՀ դրամ:

Լոտ 4 – Շարժական գույքի նկարագիրը՝ մակնիշը՝ FORD, տիպը՝ TRANSIT 2.0 TD, S/Մ գրանցման վկայագիր՝ PH762843, սեփականատեր՝ <<Տէտ Ինվեստ>> ՍՊԸ, պետհամարանիշ՝ 785 AS 61, նույնականացման համար՝ WFOVXXBDFV4C64870, ՏՄ տեսակը՝ բեռնատար, թափքը՝ սառնարան, գույնը՝ արծաթագույն մետալիկ, շարժիչի տեսակը՝ դիզելային, անիվները՝ միջինից բարձր, անվահեծերը՝ գործարանային, շարժիչի հզորությունը ՁՈՒ՝ 100, վազքը կմ՝ 355.991, թողարկման տարեթիվը՝ 2004թ., քարշակը՝ առջևի, տեխնիկական վիճակը՝ միջինից բարձր, սրահը՝ կտորյա, փոխանցման տուփը՝ մեխանիկական, ղեկը՝ ձախակողմյան, այլ գործոններ՝ ամբողջ թափքի վրա առկա են վնասված, քերծված, ծռմռված, կորոզիայի ենթարկված հատվածներ:

Լոտի արժեքը կազմում է 1.574.400 ՀՀ դրամ:

Լոտ 5 – Շարժական գույքի նկարագիրը՝ մակնիշը՝ MERCEDES-BENZ, տիպը՝ E430, S/Մ գրանցման վկայագիր՝ KB140681, սեփականատեր՝ <<Տէտ Ինվեստ>> ՍՊԸ, պետհամարանիշ՝ 777 ZZ 27, նույնականացման համար՝ WDBJF70J72B409820, ՏՄ տեսակը՝ մարդատար, թափքը՝ սեդան, գույնը՝ սև, շարժիչի տեսակը՝ բենզինային գազ, անիվները՝ միջին, անվահեծերը՝ ալյումինե, թողարկման տարեթիվը՝ 2001թ., տեխնիկական վիճակը՝ միջինից ցածր/շարժիչը ունի մասնակի նորոգման կարիք, փականները՝ ավտոմատ, հայելիները և ապակիները՝ ավտոմատ, սրահը՝ կաշեապատ/բեժ, գտնվում է վատ վիճակում, նստատեղերը մաշված են, վնասված, փոխանցման տուփը՝ ավտոմատ, ղեկը՝ ձախակողմյան, քարշակը՝ ետևի, այլ գործոններ՝ բացակայում են դիմացի հայելիները, դիմացի և ետևի թափարգելը, թափքն ունի վնասված, կոռոզիայի ենթարկված, ներկը թափված տեղեր, բացակայում են ղեկի և սարքերի վահանակի դետալները, սրահն ամբողջությամբ քանդված է, ընթացամասի դետալներ ենթակա են փոխարինման, կոտրված է դիմապակին:

Լոտի արժեքը կազմում է 534.400 ՀՀ դրամ:

Գույքերի ձևակերպման, գրանցման և տեղափոխման հետ կապված ծախսերը կրում է գնորդը:

Գույքի աճուրդը կանցկացվի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի՝ 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանի համաձայն:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ մինչև՝ 27.04.2026թ. ժամը 17:30 կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Օտյան 53/2 հասցեում գտնվող ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:
Հայտում պետք է նշվեն.
1) հայտատու իրավաբանական անձի անվանումը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները, իրավաբանական անձի ներկայացուցչի (նրա անունից հանդես եկող անձի) անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում նաև՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները.
2) հայտատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները, ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները.
3) պարտապանի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը).
4) աճուրդի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը.
5) կառավարչի անունը, ազգանունը.
6) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:
Հայտը ստորագրվում է հայտատուի (նրա անունից հանդես եկող անձի, ներկայացուցչի) կողմից:
Հայտին կից ներկայացվում են.
1) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը դրամարկղ կամ սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող մուտքի օրդերը.
2) լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը դրամարկղ կատարված լինելու փաստը հաստատող մուտքի օրդերը.
3) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.
4) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
5) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
6) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) գրավոր հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչները (այսուհետ՝ աճուրդի մասնակից չհամարվող անձ): Աճուրդի մասնակից չհամարվող անձինք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

ներկայացուցիչների, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամի չափով մուտքի վճար:
Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդին ներկա գտնվելու համար աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ ՀՀ, ք. Երևան, ք. Երևան, Տիգրան Մեծի 65Ա, 5-րդ հարկ, 3-րդ սենյակ հասցեով ուղարկում են ծանուցում աճուրդին ներկա գտնվելու ցանկության մասին՝ նշելով ներկա գտնվելու ցանկություն ունեցող անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները: Ծանուցմանը կցվում են անձը հաստատող փաստաթղթի պատճենը (նախարարության ներկայացուցիչների դեպքում՝ նաև նախարարի գրավոր հանձնարարականը), ինչպես նաև մուտքի վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը: Սույն կետով նախատեսված կարգը չի տարածվում աճուրդի մասնակից չհամարվող անձ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչների վրա:
Աճուրդի մասնակցության 1 տոկոս վճարի և 5 տոկոս նախավճարի գումարները, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի վճարի գումարը պետք է վճարվեն սնանկության գործով կառավարչին՝ դրամարկղ մուտք անելու նպատակով կամ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ում առկա թիվ 220533335604000 սնանկության հատուկ հաշվին:
Աճուրդում հաղթող է համարվում առավել գին առաջարկող մասնակիցը:
Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո՝ տասն օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը: Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:
Աճուրդի ընթացքը կարող է ձայնագրվել կամ տեսագրվել կառավարչի կողմից:
Մանրամասներին ծանոթանալու և լոտերն ուսումնասիրելու համար ցանկացողները կարող են աճուրդին նախորդող 7 աշխատանքային օրերի ընթացքում, ժամը 12:00-ից մինչև ժամը 14:00, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, դիմել սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանին (ՀՀ, ք. Երևան, ք. Երևան, Տիգրան Մեծի 65Ա, 5-րդ հարկ, 3-րդ սենյակ/, հեռ. +37444 66-66-63):